

## Հ ա յ տ ա ր ա ր ու թ յ ու ն

Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության ժամանակի և վայրի մասին

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի 1-ին մասը՝ տեղեկացվում է, որ դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացմամբ բաժինների համալրման նպատակով անցկացվելիք որակավորման գրավոր քննությունը տեղի է ունենալու **2018 թվականի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 10:00-ին** (քաղաքացիական մասնագիտացում) և **31-ին՝ ժամը 10:00-ին** (քրեական և վարչական մասնագիտացում)՝ ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական շենքում (**հասցեն՝ ք. Երևան, Զաքյան 7-3**):

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջարկվում է իրավունքի բնագավառում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ որակավորման գրավոր քննությանը ներկա լինելու համար, մինչև սույն թվականի հոկտեմբերի 26-ը համապատասխան հայտ ներկայացնել Բարձրագույն դատական խորհուրդ (Խորհրդի աշխատակազմի գրասենյակը գտնվում է **ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5** հասցեում):